

Պ. Ս. Մ. Ա. Ն. Բ.

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիչ մեկ ծրարով

Տարեկան 14 Ձր.

Վեցամսեայ 7 Ձր.

ԱՄԵՐԻԱ

Տարեկան 2 60 Տօր.

Վեցամսեայ 1.50 Տօր.

ԿԱՆԻՍԿ

ԾԱՆՈՒՅՐԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



ՄԱՐԿԱ

ՄԱՐԿԱ

ՊԵՏՐՈՒԱՐ 10 ՓԵՏՐՈՒԱՐ 1907—ՎԱՌՆԱ

Հ. Ս. Ս. Ն. Բ.

Redaction du Journal

«Гравунк»

(Bulgarie) VARNA

РЕДАКЦИЯ

на ВѢСТНИКЪ

«Ирзунк»

ВАРНА

Գրադրուք եւ չեն
սրտիր

ՄԱՐԿԱ ԻՃԻՍՏՈՒՅԻ ԳԼԵՄԱՆԹԻՆ

Պուլկարիոյ Ն. Ա. Բ. իշխան Ֆէրտինանտի մօր, իշխանուհի Գլէմանթինի մահուանը առթիւ հարկ կը դատենք անոր կենսագրութենէն քանի մը տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներուն:

Իշխանուհի Գլէմանթին Բարիզ ծնած է 1817ին. Նա աղջիկն է Գաղիոյ թագաւոր Լուի-Ֆիլիպ Օւէլանի եւ Պուլկարիոյ ցեղէն Մաւի Ամէլի թագուհիին: Որ մեծ մօրը կողմանէ Աւստրիոյ Մաւիա թէրէզա կայսրուհիէն սերած է:

Հանգուցեալ իշխանուհին իր մանկութեանը եւ երիտասարդութեանը մեծ մասը Բարիզ անցուցած է իր մէկ քոյրը՝ իշխանուհի Լուիզա Պէլճիգայի թագուհիին եղաւ, եւ միւս քոյրը՝ իշխանուհի Մարիա Վիլհելմինայի կից: Իսկ եղբայրներուն կեանքն արկածներով խառն է:

Հայրը, Լուի-Ֆիլիպ, խելացի լաւ կրթուած եւ ազատամիտ թագաւոր մը ըլլալով, իր զուակները Բարիզի Լիսէին մէջ դաստիարակել տուած է, ուր կը յաճախեն պարզ քաղաքացիներու տղաքներ, իսկ աղջիկներուն նոյն ազատական դաստիարակութիւնը տալէ եւ գիտութեան զանազան ճիւղեր ուսուցանելէ զատ, տանտիկնոջ մը պէտք եղած բոլոր բաները սովորեցնել տուաւ ընդ խիստ հակադրութեամբ իրենց մօր:

Հանգուցեալ իշխանուհի Գլէմանթին 1842 ին մահանացած է Սաքս Գոթա-Էլի կոթի իշխան Օկրստին հետ, Հետեւեալ արժանանալէ յետոյ, իր կեանքը անցուցած է Բարիզի եւ Վիէնայի մէջ: 1848ի յեղափոխութեան ատեն Վիէնայ կը գտնուէր իր երեք զաւակներով, ստիպուած էր ա՛յլ Ֆրանսա չը վերադառնալ:

*) Իշխանուհի Գլէմանթին 90 տարեկան մեռաւ Վիէնայի Գոպուրկ պալատին մէջ շաքար աւաւօր ժամը 9ին:

Նաբոլէօն Գի կայսրութեան տեւողութեանը՝ 1871 ապրիլի 18-ին Վիէնայի մէջ իր ազգականներուն քով եւ ի Վիէնայ:

1881ին իշխանուհի Գլէմանթին դժբաղդութիւնը ունեցաւ կորսնցուցելու իր ամուսինը, Սաքս Գոթա-Էլի իշխանը, որ մեռաւ էպէնթալի մէջ յետ երկարատեւ հիւանդութեամբ: Ն. Ա. Բ. իշխանուհին այրի մնալով երկար ու խոր սուգ կրեց իր եղբայրներուն եւ իր զաւակներուն հետ, որոնք են իշխան Ֆիլիպ Սաքս Գոթա-Էլի եւ Կոթայի, իշխան Օկրստ՝ այրի Պալէզիոյ Տօն Բէդրօ կայսեր աղջիկէն, իշխանուհի Գլէմանթին որ ամուսնացած է Աւստրիոյ Փօլէմի մեծ դուքսին հետ, դքսուհի Ամէլի ամուսնացեալ Պալէզի Մաքս Էմիլիանէ Գոթա-Էլի եւ Ն. Ա. Բ. Ֆէրտինանտ իշխանը Պուլկարիոյ:

Իր կրտսեր որդին Պուլկարիոյ իշխան ընտրուելէ շատ առաջ հանգուցեալ իշխանուհին հետաքրքրուած է պուլկար ժողովուրդով: Պուլկարիոյ ազատութենէն առաջ նա իր ուշագրութեան առարկայ ըրած է Պուլկարները: Հարաւային եւ Հիւսիսային Պուլկարիոյ միացման յուզումնալից դէպքերը Սերպիոյ դէմ յաղթական պատերազմը եւ մանաւանդ Պուլկարներուն իրենց անկախութիւնը պահպանելու համար մղած յուսահատական կռիւր խորագէտ յուզած են հանգուցեալը:

Մեր երկրի համար իր մասնաւոր գործին կը պարտինք, կըսէ «Սօֆիայի Սուրհանդակը» որ մայր իշխանուհին հաճեցաւ իր որդւոց Բենիամինի ճակատագիրը կցել պուլկար ժողովուրդի ճակատագրին եւ անոր ձեռք կարկառել այնչափ յուզումնալից օրերու մէջ:

Իշխանուհին իր կրտսեր որդւոյն Պուլկարիոյ գահը բարձրանալէն ի վեր կը նախընտրէր Պուլկարիոյ մէջ ապրիլ, ինք լաւ խորհրդատու մը եւ աջակիցը եղած է իշխան Ֆէրտինանտի գահ:

Հակալութեան առաջին տարիներուն մէջ, Շատ կարեւոր գերկատարած է եւրոպոյ արքունիքները պտտելով, ճանչցնելու համար իր որդւոյն Պուլկարիոյ իշխանութիւնը, իր նուէրներով հանգուցեալը թշուառները մխիթարած եւ բարեգործական հաստատութիւնները քաջալերած է:

Իշխանուհի Գլէմանթին Ֆիլիպի իններորդ զօրաբանին պատուակալ հրամանատարն է, եւ իր անունը կը կրէ այդ զօրաբանին:

Պուլկար ժողովուրդը դէպի Ն. Ա. Բարձրութիւնը իր տաժած յարգանքին եւ ակնածանքին վերջին մէկ ապացոյցն ալ տուած ըլլալու համար, պաշտօնական եւ անհատական հաստատութիւնները սեւ գրօշակներով զարդարելէ զատ, կառավարութեան ներքին քաղաքականութեան դէմ ընդդիմադիր կուսակցութիւններու պատրաստած բողոքի միջոցով՝ որ անցեալ կիրակի տեղի պիտի ունենար 15 օր յետաձգուեցաւ իշխանուհիին մահուան գուժը հասնելուն վրայ:

Նախարարական խորհուրդը այս տխուր առթիւ որոշեց իշխանապետութեան մէջ 4 ամիս սուգ պահել, որուն 2 ամիսը կիսասուգ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Նորին Արքայական բարձրութեան իշխանին սիրեցիկ մօր Գլէմանթին իշխանուհիին մահուան առթիւ, յառաջիկայ կիրակի 11 Փետրուար Սրբ. եկեղեցւոյ մէջ Ս. անմահ պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ժամը 10 կէսին:

Թաղ. Խորհուրդի այսու կը հրաւիրէ Վառնայի արքայ հայ հասարակութիւնը ներկայ գտնուիլ ի Ս. եկեղեցի, իւր վերջին յարգանքները մատուցանելու յաւատարմութեամբ իշխանուհիին յիշատակին:

Թաղ. Խորհուրդ Ս. Սարգիս եկեղեցւոյ վառնայի

ԻՐԱՒՈՒՆԻԻ ՄԱՄՈՒԼԸ

Տէր Խմբագիր,

Մեծ հաճոյքով կարգացի «Իրաւունք»-ը մամուլով մը օժտելու համար ձեր հանձարեղ գիւղը եւ խիստ համեստ խնդրանքով Արտասահմանի մէջ լոկ իր բաժնեգինով ապրելու պարկեշտութեամբ փայլող թերթը միայն «Իրաւունք» ըլլալ կը կարծեմ, իրօք կարծէ անոր տաճար երկու տարուան ծառայութիւնը աւելի մեծ զոհողութիւնով վարձատրել, ինչպէս ըրեր է Տ. Սարգիս Գուլուստիան: Բայց ասոր նման «արտով հարուստներ» մատի վրայ կը հասնուին մեր մէջ: Այս դառն ճշմարտութիւնը չվատեցնենք գիտեմ, որք շարունակեցէք ձեր անխաղաղ ուղղութեան հետ ձեր վստահութիւնը ընթերցողներու վրայ, ասոնց մէջ պիտի գտնուին բաւական թուով անհատներ որոնք չդ պիտի զլանան յառաջիկայ տարւոյ բաժնեգինը այժմէն վճարել:

Ահա եւ նիւթական աննահանգելի վիճակ մը ունենալով հանգերձ, սիրալոթար կը դրկեմ ձեզ ներկայ եւ յառաջիկայ տարւոյ բաժնեգինս, 24 Փր. Ապահովագէտ չատեր պիտի հետեւին այս օրինակին: Միայն կը խնդրեմ որ իմ իսկական անունս չհրատարակէք:

ԸՆԹԵՐՑՈՂ

ԽՄԲ.— Մամուլի գնման համար մեզ նիւթագէտ դիւրութիւն ընծալելու նպատակաւ, իրենց երկու տարուան բաժնեգինը կը վճարեն:

Տ. Յակոբ Թովմասեան Բէթլէնճէ
» Մ. Թովմասեան Ֆիլիպէ
» Յակոբ Ծերունեան
» Արմենակ Գասպեան Վառնա
» Ընթերցող մը

Ուրախ ենք ծանուցանելու թէ Տ. Յակոբ Թովմասեան եւ Տ. Մանուկ Թովմասեան որոնք իրենց ազգասիրական զգացումներով ու գործերով ծանօթ են, մեզ երկու տարեկան բաժնեգին կանխիկ վճարելէ զատ, տրամադրութիւն ցոյց կուտան կարեւոր աջակցութիւններ ընծայելու մամուլի գնումը անպատճառ յաջողեցնելու բաղձանքով:

Մեր խորին շնորհակալութիւնը անոնց, այդ ազնիւ տրամադրութեան համար:

ԹՈՒՐԻՔԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

(Շար. նախորդ թիւի)

Օսմանեան ու Պուլկարական ապ-
րանքները համաձայնութեան զկիզբ-
ները նշանակուած մաքսային թոյլ-
տուութիւններէն օգտուելու համար,
պէտք է ուղղակի փոխադրուին ցա-
մաքի ճամբով ու երկաթուղիով եւ կամ
ծովի ճամբով Օտար երկրէն մը ան-
ցած ապրանքները բացառութիւն կը
կազմեն. այդ պարագային նոյն ապ-
րանքները պիտի օգտուին վերորդեալ
թոյլտուութիւններէն. միայն թէ պէտք
չէ որ նոյն երկրին միջերանցներուն
մէջ դրուած, «թրանսիթ» պահուած
ցամաք հանուած, մէկ տեղէն միւսը
փոխադրուած եւ կամ ուրիշ գործո-
ղութեան մը ենթակուած ըլլան. Ար-
տաճման վայրի վկայականներ անհրա-
ժեշտ են. որպէս զի ապրանքները կա-
րենան օգտուիլ սահմանուած զեղչերէն
կամ թոյլտուութիւններէն:

Օսմ. երկրներու արտադրութիւն-
ներէն 6 եւ 7 թիւ ցուցակներուն մէջ
նշանակուած ապրանքները եւ ձէժ,
պարզ ապակեղէններ, սեւ չիշեր, լամ-
պայի չիշեր, կեղծ աղամանքներ, ար-
ժէքաւոր մետաղներէ չիւնուած զարդի
առարկաներ, պղինձ եւ արուրէն ա-
ռարկաներ, մետաքսէ կամ խառն մե-
տաքսէ կապերներ, մետաքսէ կամ
խառն բանուած կամ ոչ սեղանի եւ
անկողինի ծածկոցներ, շաւեր գրպանի
թաշկինակներ, զլխու «եմէնի»ներ,
խոշոր փողկապներ, մետաքսէ կամ
խառն բանուած ու չբանուած, ծոպով
կամ ոչ, մետաղէ թելերով հիւսուած
կամ ոչ գոտիներ, մետաքսէ կամ խառն
«բասմանթի»ներ, Անատոլի կա-
պերներ ու գորգեր, ֆէսեր, կանեփ,
«քոք» անուիս, եղեւիններ, կահագործի
արտադրութիւններ, խողանակներ, ոս-
կորէ սանտրեր, սուրճի գաւաթներ,
խաւաքառտէ տուփեր, բամպակէ դեր-
ձաններ, բամպակէ ժապսէներ ու
շղթաներ, ծոպեր, վարագոյրի կապեր,
մեքենայով չիւնուած բամպակէ գուլ
պաներ կարճ գուլպաներ, թիթեղէ
չիւնուած առարկաներ, «եագմա»ներ,
գունաւոր ու պարզ ուլունքէ գարդի
առարկաներ եւ ապարանջաններ ինչ-

պէս նաեւ 7 եւ 8 թիւ ցուցակներուն
մէջ նշանակուած պուլկարական ապ-
րանքներ եւ փոշի կամ զանգուած ու
զտուած շաքարներ, ամէն տեսակ
շաքարեղէններ, հոտեղէններ, «քոքմէ-
թիք»ներ, անուշաոտ օճառներ, լուաց-
քի օճառներ, մելան, երկաթէ վառա-
րաններ, խաճապակիով [պատած ա-
ռարկաներ, ամէն տեսակ կապերներ
օղակներ, պարաններ չուաններ, եր-
կաթէ ու պողպատէ դրամարկներ,
երկրագործական գործիքներ, կանեփէ
հիւսուածներ, խողովակներ եւ աման-
ներ: Ասոնց ամէնքն ալ Օսմ. եւ պուլ-
կարական մաքսատանց պաշտօնեանե-
րուն կողմէ իբրեւ արտադրող վայրի
վկայական պիտի նշանակուին ապ-
րանքին տիրոջ եւ գործարանին կամ
աշխատանքին վարիչին կամ անօրէնին
կողմէ տրուած «ֆաթուրա»ին վրայ:
Վերորդեալ ցանկին մէջ չգտնուած ապ-
րանքներուն, որոնք 2 4 եւ 10 թիւ
ցուցակներուն մէջ նշանակուած են,
արտաճման վայրի վկայականները պի-
տի նշանակուին ապրանքը արտաճող
անձին «ֆաթուրա»ներուն վրայ: Ա-
սոնց ստորագրութիւնները կամ կնիք-
ները ձրաբար պիտի վաւերացուին
երկու երկրաց մէջ անոնց վաճառատե-
ղիները գտնուած տեղւոյն առեւտրա-
կան դատարանին ու սենեակին եւ թա-
ղապետական պաշտօնեաներուն կողմէ:
Նաւահանգիստներու եւ ծովեզերքնե-
րուն մէջ այդ վաւերացման գործողու-
թիւնը մաքսային պաշտօնեաները պի-
տի կատարեն ձրաբար «ֆաթուրա»-
ներուն մէջ պէտք է բացորոշապէս
նշանակուին ապրանքները պարունա-
կող ամաններուն թիւերը ու «մար-
քա»ները, ապրանքներուն տեսակը,
քանակը, վաճառականներուն անունը
ու մականունը, երթալիք տեղը հաս-
ցէն եւ այլն: Երկու կողմի մաքսատանց
պաշտօնեաները «ֆաթուրա»ներու իս-
կական օրինակին վրայ միայն գործո-
ղութիւն պիտի կատարեն ասոնց
երկրորդ օրինակները ընդունելի չեն:
Եթէ «ֆաթուրա»ներուն եւ կամ ար-
տաճման վայրի, վկայականներուն մէջ
արտաճման վայրը սխալ ցոյց տալու
առտիճան անկանոնութիւն մը գոր-
ծուի եւ կամ ճշմարտութեան հակա-
ռակ կէտեր գտնուին այդ պարագա-
յին ամենէն նպաստաւորեալ երկրին
արտադրութիւնները պիտի գործա-
դրուին: Մաքսային պաշտօնեաները
քննութեամբ պէտք է համոզուած գոյա-

ցնեն թէ «ֆաթուրան»ը եւ արտաճ-
ման վայրի վկայականները բոլորովին
համապատասխան են ներածման պա-
հուն յայտարարուած ապրանքներուն:
Եթէ քննութեան պահուն հաստատուի
թէ օսմ. եւ պուլկարական ապրանք-
ներուն հետ համանման օտար ապրանք-
ներ ալ կան եւ կամ թէ ֆաթուրանե-
րը եւ արտաճման վայրի վկայական-
ները կեղծ են, այդ պարագային ապ-
րանքին եւ այդ արարքին հեղինակ-
ներուն նկատմամբ պիտի գործադրուին
արտաճման երկրին մաքսային կանո-
նագրութեան տրամադրած պատիժները:
Եթէ հաստատուի թէ վաճառատուն մը
այդ կարգի խարդախութիւն մը գոր-
ծած է, արտաճող երկրի երկրի ներածող
երկրին տեղեկութիւն պիտի հաղորդէ
նոյն արարքին հեղինակին նկատմամբ
դատական հետապնդում կատարելու
համար: Երկու երկրներէն տրուած
արտաճող վայրի վկայագիրները դրոշմի
ու արձանագրութեան տարբերէ եւ
ամէն տեսակ ծախքերէ զերծ պիտի
ըլլան:

Երկու երկրներէն մէկին մէջ հաս-
տատուած եւ ըստ օրինի հիմնուած բա-
ժանորդագրական անանուն ընկերու-
թիւնները եւ առեւտրական, ճարտա-
բարուեստի, սեղանաւորական ու ա-
պահովագրական ընկերութիւնները
պիտի կրնան տեղական դատարաննե-
րուն մէջ դառ բանալ եւ կամ բաց-
ուած դատի մը դէմ ինքզինքնին պաշտ-
պանել: Այդ ընկերութիւնները եթէ
միւս կողմի երկրին մէջ ձեւը կամ
գործակալութիւն հաստատել ուզեն,
պիտի հարկադրուին տեղական օրէնք-
ներուն համաձայն գործել: Օսմ. պան-
քան եւ Պուլկարական պանքան պիտի
կրնան հիմնուելու Կ. Պոլսոյ ու Սո-
ֆիայի մէջ մէյմէկ մասնաճիւղեր հաս-
տատել, տեղական օրէնքներուն հա-
մակերպելով: Երկու կողմի առեւտրա-
կան սենեակները պիտի կրնան փոխա-
դարձ քար վաճառականութեան ու
ճարտարարուեստի միջոցներ հաստա-
տել, առեւտրին դարգացածը հա-
մար: Երկու պայմանագիր կողմերու
ժողովուրդը մինչեւ որ մասնաւոր հա-
մաձայնութիւն մը կնքուի, գործարանի
եւ առեւտրական «մարքա»ներու վե-
րաբերալ խորոց մէջ տեղական ժո-
ղովուրդին նման միեւնոյն պաշտպա-
նութիւնը պիտի վայելին, սակայն տե-
ղական օրէնքներուն պիտի համակեր-

պին: Ոսկիէ, արծաթէ, բլաթինէ եւն.
չիւնուած ոսկերչական առարկաները
եւ գոհարեղէնները երկու երկրներ-
րուն մէջ ալ հաստատուած «քոնթ-
իօլ»ին պիտի ենթարկուին: Թիւ 12, 13
եւ 14 ցուցակներուն պարունակած
տրամադրութիւնները սահմանուած են
համոզուած ըլլալով որ ներկայ հաճա-
ձայնութեան կնքուած պիտի դիւրա-
ցնէ սահմանադրութիւն վրայ կատար-
ուած վաճառականութեան, շրջակայ
հոգերուն եւ նաւագնացութեան վերա-
բերեալ խնդրոց կարգադրութիւնը:
Ներկայ համաձայնութիւնը 1907 յուն-
վար 1ին պիտի սկսի գործադրուիլ:
մինչեւ որ երկու պայմանագիրներուն
կողմէ անոր ջնջումը ծանուցուի, ըն-
դունելի պիտի ըլլայ: Ըստ օրինի ջնջ-
ւումը ծանուցուած օրէն մէկ տարի
ետք պիտի դադարի: Այս համաձայնու-
թեան կիրառումէն փորձով եւ կամ
երկու կողմի անտեսական օգտին հա-
մար յարմար դատուի, փոփոխութիւն-
ներ պիտի ըլլան եւ կամ նոր տրամա-
դրութիւններ պիտի աւելցուին:

ԱՍԵՐԻՎԱՋԱՅ ԿԵՆՏԷ

— * —

«Կոչնակ»ի մէջ կը կարդանք
հետեւեալները.

Պատ. Հայկունի Նիւ-Եօքս գացած
էր Յիւզէնոյի Հայ Երիցական եկեղեց-
ւոյ պարտուող բարձման համար դրամ
հանգանակելու նպատակաւ: Դեկտեմ-
բերի վերջերը Յիւզէնոյ վերադարձած է
երեք հազար տոլարէն քիչ մը աւելի
դրամ հանգանակած ըլլալով, մեծաւ
մասամբ Ամերիկացիներէ հանգանակ-
ուած է, իսկ Հայերէ առնուած է 890
տոլարի չափ միայն:

— Նիւ. Եօքսի Հայկական Միութիւն-
ը դպրոց մը բացած է Հայ տղայոց
ազգային լեզուէն սորվեցնելու համար:
Բացման օրը 30 աշակերտ ունեցած է
այս դպրոցը, որուն վարժուհին է բա-
րեկիրթ ու Հայ լեզուին նախաձեռն
խնդիր տիկին մը:

— Յ. Թավադեան քաղաքի 5 յոգ
Ալիբեյի վրայ յէնք մը ծախու առած
է վերջերս 800,000 տոլարի: Տարեկան
եկամուտն է այս շէնքին 30,000 տո-
լարի չափ:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

52

ԼԻՍՉԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԻ

— * —

ՊԵՐԵՓԷ

(Շար. նախորդ թիւի)

— Իր դարմաւաք, անանկ չէ՞ յա-
րեց Պուտ պէ՞ կուգնիով այն առ-
տակարգ երեւոյթը որ Աւագակա-
պետը պատկերացող իր կերպարան-
քն վրայ Բայց ամենեւին մի՞ դար-
մանաք... ասիկա կը խոստ վանիմ
քիզի. որովհետեւ մարդերու մէջ դուք
չտեսնուածաւորութիւն մըն էք եւ
գիտեմ թէ անհու գորով մը, գիտե-
թիւն մը կը տաձէք թշուառի մը նը
կատարաւ: Եթէ դուք արցունքներ
տեսնելով զգուշանքներ ճանչնալով ու

անիրաւութիւններ երեւակայելով
ապրած էք, գիտե՞ք որ ես զանոնք
կրած եմ կայիս վրայ: Ճշմարիտ տէր-
վիշ մը եղած եմ ամենէն քաղցր օրե-
րէս սկսեալ ու մարդկային գազանու-
թիւնը տեսած եմ իր բովանդակ դար-
չու թեան մէջ: Ահա էն զօրաւոր պատ-
ճառն որ կը կապէ զիս այս թշուառ
կեանքի տղան ու անոր արդարա-
ցի վրէժն իմ կեանքին վերջին նպա-
տակը կը գտնայ... Այո՛, Աստուծոյ
տէրվիշ, ոճիւր բաժնի՞ որ մարդուն ա-
նայից ձեռքերուն վրայ արեան կա,
թիւններ կը թողու, վատութիւն է,
վայրենիութիւն է, գարշելի է... Ես-
կայն կայ ոճիւր մը՝ դուրս արիւնք կը
բուժէ սրտիւ մէջ բացուած ամենէն
անոռութիւն կարծումը վերջը կայ ու-
ճիւր մը՝ որմէ ժայթքած արիւնք մարդ-
կային շարագործութեան արիւնք կը
ծածկէ. մէկ խօսքով՝ կայ ոճիւր մը, որ
տրգարութիւն է... Ես այդ ոճիւրն է
պիտի գործիմ Աստուծոյս ու խղճիս
հանդէպ: Ըսէ՛ք պէ՛տք է թունաւոր
օճիւր ապրի...

— Միթէ՞ փաշան այնքան շար մէկն

է, թո՞ւովեց Աւագակապետը՝ աւելի
խորը թափանցելու ներքինի զարհու-
րելի յայտնութեանց:

Պուտ պէ՞ ժպտեցաւ... բայց այդ
ժպիտը դողդոջացող իր թօշնած ու
տակարացած շրթունքները: Յետոյ Ա-
ւագակապետին զէմքը դիտեց ու ը-
սաւ.

— Ի՞նչ կը կարծէք... սուք բարի
մէկը ճանչցած էք զինքը: Սխալ: Մի
խաբուիք: Այս սեմերէն ներսը ծած-
կուած է անորոց շարագործութիւն մը
զոր նկարագրելու անգամ կը սոսկոյ
մարդս: Ո՛հ, տեսաք այդ հարեմանոց
ըսած գայլերի զօրաւորանք, անանկ չէ՞
... ո՞վ կար անոր մէջ... ո՞չ պապէն
թշուառ ազգի մը թշուառ կոյսերն
էին հոն հեծողները... Դուք ձեր
խիղճը, ձեր աստուածը, ով տէրվիշ,
ի՞նչ կրօնէ... Ի՞նչ անուն կուտան
մարդուն մը՝ որ թերեւորեւ մէջ իր
կաքին հաճոյքները կը հագեցունէ ու
անմեղներու արեւնով կը սնանի:
Միայն սա կեանքի տղան տեսաք
սակայն անդին մատաղատի կոյսեր
կան, որոնք կը լլկուին այդ գազանա-

բարոյ փաշայի զրկաց մէջ ու կը
թօշնին դեռ չը բացած իրենց կեան-
կին կոկոնը... Ո՛ւր գրուած է ա-
ստիկ անիրաւութիւն մը... ո՛ր է
ասոր արդարութիւնը: Մտածեցէ՛ք...
դուք որ անկեանքներու ձեռքերնիդ
կուտաք, դուք որ արցունքներու մէջ
տառապողներու պաշտպան էք, մէկ
խօսքով՝ դուք որ կոչուած էք մարդ-
կութեան առաքեալն ըլլալու, պիտի
հաւատարմե՞ք... պիտի լռե՞ք... պիտի
լռե՞ք այս բոլորը: Կը հարցունեմ. կա՞յ
ի՞նչ մը որ չը ցնցուի ասանկ հրէշա-
յին արարքներու հանդէպ...

Աւագակապետը կեցած տեղը դող
դղած ու չը կրցաւ պատասխանել:

Ու դադարեալ մը՝ որ փայլակի ա-
րագութեամբ իր շարչարուած հոգիէն
անցաւ, բոլոր էութիւնը հնցեց, տար
տղեց...

— «Թուրք մընէր իրեն հետ խօսող,
եթէ ոչ ծպտեալ մէկ»... ասա ի՞նչ էր
որ մտածեց ան:

Ի՞նչ կերպով հասկնայ պէտք էր:
Աւագակապետը պահ մը խորոյմնե-
րով ծանրացած ճակտին տարաւ իր

Мечалкина Д. Топровъ и О-во — Жарна